

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԷ
ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ՝ ԳԵՐԺ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆԻ
ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՕԹՆԱՄԵԱՅ ՆՈՐ ՇՐՋԱՆԸ

Ինչպէս պաշտօնական հաղորդագրութեամբ հաղորդած էինք Թեմիս համայն հաւարացեալներուն, թէ 82րդ Թեմական Պարգամաւորական Ժողովը, որ գումարուած էր Մայիս 1ին եւ 2ին, 2009 Լոս Անճելըսի Սուրբ Յակոբ Հայց. Եկեղեցւոյ մէջ, Թեմիս Կանոնադրութեան համաձայն քուէարկութեամբ որոշեց, որ յառաջիկայ տարուան Մայիսէն սկսեալ եօթնամեայ շրջանի համար որպէս Առաջնորդ իր պաշտօնավարութիւնը շարունակէ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան:

Պարգամաւորական Ժողովի Դիւանի Կազմի՝ Արեւնապետունի Էտրիըն Գրիգորեանի, Փոխ Արեւնապետ Էտ Նիգարեանի, Անգլերէնի Արեւնադպրունի Զարունի Տէր Մկրտիչեանի եւ Հայերէնի Արեւնադպիր Արժ. Տ. Սիփան Աւագ Քհնյ. Մխսեանի ստորագրութեամբ, պաշտօնական նամակով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին տեղեկագրուեցաւ Պարգամաւորական Ժողովին որոշումը՝ Թեմակալ Առաջնորդ Սրբապան Հօր պաշտօնավարութեան նոր շրջանի մասին:

Գոհունակութեամբ կը փափաքինք հրապարակաւ յայտնել, թէ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը իր Մայիս 13, 2009 թուակիր գրութեամբ, շնորհաւորական հետեւեալ նամակը ղրկած է Առաջնորդ Սրբապան Հօր:

Գերաշնորհ
Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան
ԱՄՆ Հայոց Արեւմտեան Թեմի Առաջնորդ
Պըրպէնք, Գալիֆորնիա

Սիրելի Սրբապան,

Գոհունակութեամբ տեղեկացանք, որ ԱՄՆ Հայոց Արեւմտեան Թեմի 82րդ Թեմական Պարգամաւորական Ժողովը, հիմք ունենալով Թեմի Կանոնադրութեան 93(բ) հատուածը, որոշում է կայացրել Ձեզ վերահաստատել ԱՄՆ Հայոց Արեւմտեան Թեմի առաջնորդի պաշտօնում:

Հայրապետական օրհնութեամբ վաւերացնում ենք Ձեր վերահաստատումը առաջնորդական պաշտօնում եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Մեր շնորհաւորանքներն ու բարեմաղթանքները:

Առ Աստուած աղօթքով հայցում ենք Բարձրեալ Տիրոջ Սուրբ Աջի հովանին եւ պօրակցութիւնը Ձեզ, որպէսպի հոգեւոր նոյն նախանձախնդրութեամբ շարունակէք առաջնորդական Ձեր առաքելութիւնը՝ ի պայծառութիւն Արեւմտեան Թեմի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Սիրոյ Ողջունիւ եւ Օրհնութեամբ,
Աղօթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Արեւմտեան Թեմը իր երախտագիտութիւնը կը յայտնէ Վեհափառ Հայրապետին եւ շնորհակալութիւն՝ 82րդ Թեմական Ժողովի Պարգամաւորներուն, որոնք քաջածանօթ ըլլալով Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի անցնող

վեց փարիներու անձնուէր ծառայութիւններուն, որոշեցին եօթնամեայ նոր շրջանի համար վիճք Առաջնորդ ունենալ նաեւ յառաջիկայ փարուան Մայիսէն սկսեալ: